

## Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ Երևանի պետական համալսարան

### «ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄԱՆԵՐԻ» ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Ինչպես ցույց է տալիս բանասեր ուսանողների հետ աշխատանքի փորձը, նրանք մեծ հետաքրքրություն են ցուցաբերում անգլերենի ուսուցման նկատմամբ, երբ հաղթահարում են որոշակի լեզվաբանական բնույթի դժվարություններ: Օրինակ՝ երբ նրանք փորձում են սովորել միջազգային բառեր կամ եզրույթներ, հաճույքով են բառերը ճանաչում, բարգմանում, գործածում իրենց ակտիվ խոսքի մեջ, համեմատում հայերեն համարժեքների հետ:

Ինչպես հայտնի է տարբեր լեզվներում միջազգային բառերի թարգմանությունն առանձնակի դժվարություն չի ներկայացնում, քանի որ օտարալեզու բառը հիմնականում հուշում է թարգմանչին նրա հայերեն տարրերակը: Նույնը չի կարելի ասել այսպես կոչված կեղծ միջազգային բառերի կամ «քարգմանչի կեղծ բարեկամների» մասին: «Թարգմանչի կեղծ բարեկամները» հիմնականում փոխներթափանցման պատճառ են դառնում, քանի որ արդեն իմաստով կամ ձևով հայտնի բառը կարող է ունենալ լրիվ այլ իմաստ:

Ըստ “Let’s translate” ուսումնական ձեռնարկի հեղինակներ Ն. Հարությունյանի և Ն. Հակոբյանի՝ «քարգմանչի կեղծ բարեկամները» դասակարգվում են հետևյալ խմբերի.

1. Բառեր, որոնք ունեն հայերեն բառերի հետ արտաքին նմանություն: Համատեքստից ելնելով՝ այս բառերը կարող են ստանալ նաև իմաստային տարբեր երանգներ և թարգմանվել այլ կերպ:
2. Բառեր, որոնք հոգնակի թվում ձեռք են բերում նշանակություն /Հարությունյան, Հակոբյան, 2006/:

Նշված ձեռնարկի հեղինակները հիմնականում նպատակ են հետապնդում զարգացնել համապատասխան թարգմանչական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Այդ նպատակով

նրանք սկզբում առաջարկում են համապատասխան տեսական գիտելիքներ, հետո՝ վարժություններ: Ակնհայտ է, որ անզերեն լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկը բառապաշարի փոխներթափանցման կանխումն ու հաղթահարումն է: Ուսանողները ձեռք են բերում համապատասխան բառազիտական գիտելիքներ, յուրացնում են տվյալ խնդրին վերաբերող դրույթները և ակտիվացնում իրենց բառապաշարը համապատասխան վարժություններով: Առաջարկվում է տասը վարժություն՝ ընդհանուր առմանք թարգմանական բնույթի: Այդ թարգմանությունները մեծ մասամբ աշխատատար են, սակայն տիպային օրինակները բացահայտում են փոխներթափանցում առաջացնող իմաստը. Օրինակ՝ *extravagant* բառն ունի երկու իմաստ:

1. Spending much more than is necessary or prudent, wasteful;
2. Excessively high (of prices) /Հարությունյան, 2006/:

Հեղինակներն առաջարկում են մի այլ վարժություն: Ըստ իսմեթողական տեսանկյունից այն ճշգրտման կարիք ունի, քանի որ այսպես է հնչում՝ «Բացատրել, թե ինչու ձևով նման հայերեն բառերը չեն կարող փոխարինել ընդգծված անզերեն բառերին»: Բանն այն է, որ բացատրելու անհրաժեշտություն չկա, քանի որ զործ ունենք «քարգմանչի կեղծ բարեկամների» հետ, և հետո, անհրաժեշտ է հստակորեն ընդգծել, թե ինչ լեզվով է տրվում բացատրությունը: Եթե օտար լեզուներ ուսումնասիրող ուսանողներին է հարցն ուղղված, ապա պարզ է, որ պետք է բացատրել անզերեն, իսկ եթե առաջադրանքը կատարում են բանասերները, որոնց մասնագիտական լեզուն հայերենն է, ապա այս պահանջն անհրաժեշտ է ավելի հստակ ձևակերպել:

1. Պահանջել, որ նրանք դուրս գրեն տվյալ բառի բացատրությունը ոչ միայն անզերեն-հայերեն, այլև անզերեն բացատրական բառարաններից:
2. Կարդալ դուրս գրած բացատրություններն իրենց օրինակներով:
3. Ի վերջո բացատրել ոչ միայն հայերենով, այլև անզերենով, թե ինչն է դառնում փոխներթափանցման պատճառ: Օրինակ՝

Tolstoy devoted the remainder of his life to writing little **pamphlets**, preaching peace and love and the abolition of poverty.

Ուսանողները դուրս են գրում **pamphlet** բառի հայերեն նշանակությունները Հ.Ա. Ասմանգույյանի և Կ.Յ. Հովհաննիսյանի խմբագրությամբ կազմած անգլերեն-հայերեն բառարանից:

Pamphlet- 1. Բրոշյուր; 2. Պամֆլետ, պարսավագիր

Հետաքրքիրն այն է, որ Oxford Advanced Learner's Dictionary of Current English (1999) բառարանում չի տրվում այդ բառի երկրորդ իմաստը:

Pamphlet - a very thin book with a paper cover, containing information about a particular subject.

Երրորդ վարժությամբ հեղինակներն ուսուցանում են բառեր, որոնք տարբեր ենթատեքստերում, տարբեր խոսքային իրադրություններում կարող են հանդես գալ որպես «քարգմանչի կեղծ բարեկամներ»:

Չորրորդ վարժությունն իր պահանջով մեծ դժվարություն կարող է ներկայացնել ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար, քանի որ նրանք չունեն համապատասխան լեզվական զիտելիքներ «քարգմանչի կեղծ բարեկամները» ճանաչելու և բարգմանելու համար: Դրա փոխարեն մենք առաջարկում ենք նոյն բառով կազմված տարբեր նախադասություններ, որ մի դեպքում տվյալ բառը հանդես է գալիս իր բուն իմաստով, մյուսում՝ իրադրային: Ընդ որում, իրադրային իմաստը դառնում է քարգմանչի կեղծ բարեկամ: Օրինակ՝ նոյն հեղինակներն առաջարկում են հետևյալ նախադասությունը.

When he was fifteen Chopin entered his father's school for academic studies.

Անգլերեն-հայերեն բառարանում academic բառն ունի հինգ իմաստ.

1. Գիտական համալսարանի անդամ
2. Pl. գուտ տեսական ապացույցներ կամ փաստարկներ
3. Pl. համապատասխան հագուստ
4. Ակադեմիական, համալսարանական
5. Զուտ տեսական, վերացական

Ուսանողների համար բավականին դժվար է քարգմանել տվյալ բառահոդվածի հիման վրա, որովհետև “academic studies” տրված

նախադասությունում նշանակում է «ուսումնական պարապմունքներ»: Այդ բառահոդվածը ինչ-որ տեղ, ինչպես և շատ այլ բառահոդվածներ, կարող են ոչ միայն օգնել, այլև խանգարել, որ ուսանողները ճիշտ բարգմաննեն բառային փոխներթափանցում առաջացնող բառերն ընդհանրապես, «քարգմանչի կեղծ բարեկամները»՝ մասնավորապես:

Oxford Advanced Learner's Dictionary of Current English (1999) բառարանում նույն այդ բառի բառահոդվածում տրված են ոչ միայն բացատրությունները, այլև նախադասություններով և բառակապակցություններով ամրագրված օրինակներ: Ընդ որում այդ օրինակներն այնքան դիպուկ են, որ ուսանողները հեշտությամբ կարող են կրահել իմաստները: Օրինակ՝

The students return in October for the start of the new academic year.  
(ուսումնական սարի)

She wasn't very academic and hated school. (ուսումնատենչ)

It is a purely academic question. (գիտական)

Այսպիսով, կարելի է համապատասխան մեթոդական եզրակացություններ անել:

1. Փոխներթափանցումը հաղթահարելու համար կիրառելի են ինչպես ուսուցման դեղուկտիվ, այնպես էլ ինդուկտիվ եղանակները:
2. Հարկ է պատշաճ ուշադրություն դարձնել, թե ուսանողներն ինչ բառարաններից են օգտվում:
3. Ուսուցման նախնական փուլում պահանջել, որ ուսանողները բառային փոխներթափանցումը հաղթահարեն ոչ միայն գիտականորեն, աստիճանաբար ուժիկեքսիայի աստիճանը բարձրացնելով, այլև համեմատական-հարադրական եղանակով, եթե նոյն բառը բարգմանվում է տարբեր ենթատեքստերում, տարբեր խոսքային իրադրություններում:
4. Ուսուցման միջին և ավարտական փուլերում պահանջել կամ ստեղծել ուսուցման այնպիսի պայմաններ, որ ուսանողները սկսեն գործածել տվյալ բառը իրենց խոսքում հարց ու պատասխան տալու ընթացքում, նախադասություններ կազմելիս, երկխոսելիս:

Մերողական տեսանկյունից արդյունավետ չէ այն պահանջը, ըստ որի ուսանողները պետք է մեկնարաննեն տրված բառակապակցությունների նշանակությունը, քանի որ այդ պահանջի կատարումը չի նպաստում ոչ լեզվական, ոչ էլ լեզվաբանական իրազեկության զարգացմանը: Օրինակ՝

Officers of the trade union.

Ակնհայտ է, որ «քարգմանչի կեղծ բարեկամն» այստեղ officer բառն է: Ուսանողները իմնականում գիտեն այդ բառի առաջին իմաստը՝ սպա: Սակայն երկրորդ իմաստը՝ աստիճանավոր, պետական պաշտոնյա, պետական ծառայող շատ քերին է հայտնի: Փաստորեն, officers of the trade union արտահայտությունը բարգմանավում է արհմիության պաշտոնյաներ կամ դեկանավորներ: Պարզ է, որ առանց նախնական վարժությունների հնարավոր չէ կռահել այդ իմաստը: Այդ նպատակով առաջարկվում է տվյալ բառը ներկայացնել տարրեր բառակապակցություններում.

Orderly officer - հերթապահ սպա

Non-commissioned officer - ենթապահ

Returning officer - ընտրական հանձնաժողովի նախագահ (Անգլիայում)

Oxford Advanced Learner's Dictionary of Current English (1999) բառարանում տրվում են այդ բառի հետևյալ բառակապակցությունները

A customs officer

Officers of state

Welfare officers

Փաստորեն, տարրեր բառակապակցություններով նույն բառը բարգմանել հանձնարարելը նպաստում է այդ բառի իրադրային իմաստի բացատրությանը, ինչը տեղի չի ունենում, եթե պահանջվում է դա անել մի բառակապակցություն բարգմանելիս:

Ասվածի տեսանկյունից հետաքրքիր է platform բառը, քանի որ խորիրդային շրջանում այն դժվար թե համարվեր «քարգմանչի կեղծ բարեկամ»: Բանն այն է, որ այդ բառը հայերենում հայտնի է կառամատույց և քաղաքական ծրագիր իմաստներով: Սակայն ինչ-որ տեղ ապաքաղաքականացված ուսանողության շրջանում այդ բառը երբեմն հայտնի է միայն առաջին իմաստով:

Item of the party platform բառակապակցության իմաստը կռա-

հելք պայմանավորված է ուսանողների սոցիալ-մշակութային իրազեկության զարգացման աստիճանով: Հետաքրքիրն այն է, որ ուսանողների մեծ մասին ծանոթ է platform բառի համակարգչային համակարգի տեսակ իմաստը. An IBM platform, a multimedia platform: Այս բառահոդվածը հայերեն-անգլերեն Հ. Ս. Ասմանգույշանի և Ս. Ի. Հովհաննիսյանի խմբագրությամբ գրված բառարանում հնացած է, քանի որ այդ վերջին իմաստն ընդհանրապես բացակայում է /Ասմանգույշան, Հովհաննիսյան, 1991:/:

Ուսանողների համար մեծ դժվարություն չէ բարգմանել constitutional guarantees and protections բառակապակցությունը, սակայն public proclamations բառակապակցության մեջ ուսանողները հաճախ դժվարությամբ են բարգմանում proclamation բառի պահանջվող իմաստը 1. հայտարարություն, ազդարարում, 2. հոչակում: Public proclamations բարգմանվում է հրապարակային հայտարարություն կամ հոչակագիր, սակայն մինչ այդ բառակապակցություններ բարգմանելը ճիշտ է տալ մի քանի բառակապակցություններ proclaim բառով.

The president proclaimed a state of emergency.

Նախագահը հայտարարեց արտակարգ դրություն:

The charter proclaimed that all states would have their own government.

Խարտիան հոչակեց, որ բոլոր պետությունները պիտի ունենան իրենց կառավարությունը:

He proclaimed himself emperor.

Նա իրեն նիստես հոչակեց:

Այնպիսի վարժություններ կազմելիս, որոնք կօգնեն հաղթահարել բառային փոխներբափափանցումը, անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների նախնական գիտելիքները, բառերի ծագումը, հայերենի և անգլերենի տիպարանության տեսանկյունից նրանց արտասանական, թեքական առանձնահատկությունները:

Միայն բարգմանական հմտություններ պարունակող վարժությունները չունեն մեթոդական մեծ արժեք, քանի որ ցանկացած նախադասություն կարելի է բարգմանել բառարանի միջոցով: Օրինակ՝ «բարգմանչի կեղծ բարեկամները» շարքի համար նախատեսված վարժություններից մեկում նշված հեղինակները առաջարկում են հետևյալ պահանջը.

## Վարժություն 6. Թարգմանել

1. Constitution of the International Military Tribunal
2. Lumber interests
3. International Longshoremen's Association
4. Convention of the Republican Party
5. Congress of the British Communist Party /Հարությունյան, 2006/.

Թարգմանիչ մասնագիտության բաժնում սովորող ուսանողների պարագայում այսպիսի վարժությունն արդարացված է, սակայն բանասեր ուսանողների համար այս վարժությունը հնարավոր է հետաքրքրություն չներկայացնի մի շաբթ առումներով.

1. Այն չի պարունակում ստեղծագործական տարր
2. Բառակապակցությունները տրված չեն տիպական խոսքային իրադրություններում
3. Դրանում ընդգծված չեն «քարգմանչի կեղծ բարեկամները»
4. Թարգմանելու համար տրված բառակապակցությունները պարունակում են մեկից ավելի բառային դժվարություն
5. «Թարգմանչի կեղծ բարեկամները» չունեն հաղորդակցական նշանակություն

Առաջին բառակապակցությունում tribunal բառն ունի երկու իմաստ՝ 1. դատարան, 2. դատավորի տեղը: Եթե հեղինակները tribunal բառը առաջարկեին երկրորդ իմաստով, ապա կարելի էր խոսել բառային փոխներթափանցում առաջացնող «թարգմանչի կեղծ բարեկամների» մասին:

Lumber interests բառակապակցության թարգմանությունը մեծ դժվարություն է ներկայացնում ուսանողների համար, քանի որ Lumber բառն ունի մի քանի իմաստ՝ 1. Հնոտիք, 2. Անտառանյութ, 3. Խճողել, 4. Աղմուկով անցնել: Երկլողմանի դժվարություն ներկայացնող հատկաբանական բառակապակցություններն անհրաժեշտ են թարգմանել լուրջ նախապատրաստական աշխատանքներից հետո:

Հականալի չէ, թե ինչ թարգմանչի կեղծ բարեկամ է պարունակում International Longshoremen's Association բառակապակցությունը, քանի որ ուսանառները հիմնականում այն ճիշտ են թարգմանում: Նույնը վերաբերում է հաջորդ երկու բառակապակցություն-

ներին: “Convention” և “Congress” բառերը այդ բառակապակցություններում չեն կարող համարվել թարգմանչի կեղծ բարեկամներ: Օրինակ եթի համեմատում ենք հետևյալ նախադասությունները

1. She is a young woman who enjoys flouting conventions.
2. The conventions of the Democratic Party took place last week.
3. She studies the conventions of Greek tragedy.

ապա պարզում ենք, որ ավելի մեծ դժվարություն է ներկայացնում “flouting convention” բառակապակցությունը, որը նշանակում է «ծաղրող սովորույթ, ոճ»: Տվյալ նախադասությունը թարգմանվում է հետևյալ կերպ. *Նա մի երիտասարդ կիմ է, ով սովորույթ ունի ծաղրելու իրիշներիմ:*

Երրորդ նախադասությունում convention բառը նույնպես ոճ կամ մերող նշանակությամբ կարող է հանդիսանալ գաղ որպես թարգմանչի կեղծ բարեկամ: Երրորդ նախադասությունը կարելի է թարգմանել հետևյալ կերպ. *Նա ուսումնասիրում է հունական ողբերգության ոճերը:*

Այսիսով, կարելի է պնդել, որ համարյա բոլոր միջազգային բառերը կարող են հանդիսանալ գաղ որպես «քարգմանչի կեղծ բարեկամներ»: Կարևոր է բացահայտել տվյալ բառի հիմնական իմաստը համապատասխան խոսքային իրադրությունում:

Նշված օրինակների վերլուծությունը հավաստում է, որ բառերը ձեռք են բերում նոր իմաստներ ոչ միայն նոր իրադրությունում, այլև, երբ փոխվում է նախընտրվող լեզվի ոճը՝ գրական, գիտական, խոսակցական: Բանասեր ուսանողները ճանաչելով, թարգմանելով, վերլուծելով «քարգմանչի կեղծ բարեկամները», ոչ միայն յուրացնում են անզինենի բառապաշարը, այլև խորացնում են իրենց լեզվաբանական գիտելիքներն ու մերոդական իրազեկությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harutyunyan N., Hakobyan N. Let's translate. Yerevan: “Interlingua” Linguistic University, 2006.
2. Арнольд И.В. Лексикология современного английского языка. М.: Издательство литературы на иностранном языке, 1959.

3. Hornby A.S. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, 1999.
4. Ասմանգովյան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի. Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, Հայտարակություն, 1991:

**Г. ДАНИЕЛЯН – *Стратегия работы с “ложными друзьями переводчика” в гуманитарном курсе английского языка.*** – В статье рассматривается проблема обучения иноязычной лексике посредством последовательного изучения «ложных друзей переводчика». С одной стороны, такая работа способствует усвоению студентами иноязычной лексики, с другой, – развитию их лингвистической и методической компетенции.

Принципиально важно то, что студенты-филологи учатся выявлять «ложных друзей переводчика» в новых учебно-речевых ситуациях, с учетом стилистических, жанровых особенностей изучаемого текста или речевого сообщения.

**G. DANIELYAN – *The Strategies for Working with “False Friends of Translater” in the English Course for the Humanities.*** – The paper touches upon the problem of teaching target vocabulary through consecutive study of “false friends of translator”. On the one hand, this kind of work contributes to acquiring target vocabulary, on the other hand, it develops the students’ linguistic and methodological competence.

It is important to emphasize that the future philologists learn to reveal, translate and use false friends of translator not only in new academic speech situations but also taking into consideration stylistic, genre peculiarities of the target text.